



Ավտոկինոթատրոնների Վերաբացման Արձանագրություն Ուժի Մեջ Մտնելու Ամսաթիվը՝ 2021թ. Մայիսի 06, Հինգշաբթի՝ առավոտյան 12:01

Վերջին թարմացումները՝ (Փոփոխությունները նշված են դեղին գույնով)

5/5/21՝

- Ավտոկինոթատրոնների և միջոցառումների ընթացքում թույլատրվում է սննդի բեռնատարների (food truck) գործունեությունը:

Այս Արձանագրությունը վերաբերում է ինչպես արդեն հիմնադրված, այնպես էլ մեքենայով կինոթատրոնների նոր գործունեությանը: Մեքենաներով բոլոր կինոթատրոնները պետք է ունենան բավարար ենթակառուցվածքներ, անձնակազմ և վերապատրաստում՝ ֆիզիկական հեռավորության, դեմքի ծածկոցներ կրելու և սանիտարահիգիենիկ պահանջները բավարարելու համար: Հիմնադրված հաստատությունները՝ անձնակազմով, սանհանգուցներով, և թույլատրված սննդի հաստատություններով ավելի հեշտությամբ կարող են հետևել անվտանգության պահանջներին: Մեքենայով կինոթատրոնների նոր գործունեությանը հատուկ պահանջները, որոնք սահմանվում են ավտոկայանատեղիների և մյուս տարածքների համար, որոնք նախապես սահմանված չեն եղել մեքենայով կինոթատրոնների գործունեության համար, թվարկված են սույն արձանագրության վերջում:

Մեքենայով կինոթատրոնի գործունեությունը պետք է ղեկավարվի տեղանքի համար պատասխանատու մեկ գործատուի կողմից, որը կստանձնի ողջ անձնակազմի շարունակական վերապատրաստման և անձնակազմի ստուգման, բոլոր անհրաժեշտ սարքավորումներով և նյութերով ապահովման, անվտանգության բոլոր միջոցառումների պահպանման պատասխանատվությունը՝ ցանկացած ներկայացման ժամանակ, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում տեղային և քաղաքային իշխանությունների կողմից հաստատումներ ստանալու պատասխանատվությունը:

Մեքենաներով կինոթատրոնները կարող են կատարել ուղիղ հեռարձակում ուրիշ վայրից այն պայմանով, որ նկարահանումը համապատասխանի Հավելված J-ում մանրամասն ներկայացված պահանջներին:

Ցանկացած սննդի ծառայություն պետք է լինի տեղում լիցենզավորված ռեստորանից՝ արտոնագրված կոնցեսիոն տաղավարը, **սննդի բեռնատարը** (food truck) կամ նախապես փաթեթավորված սնունդը պետք է լինեն այնպիսի շուկայից, որը թույլատրվում է Շրջակա Միջավայրի Առողջապահության կողմից: Սնունդը կարող է գնվել և վերցվել տեղում կամ պատվիրվել երրորդ կողմի առաքման ծառայությունների միջոցով և առաքվել հաճախորդի մեքենայի մոտ: Հաճախորդները պետք է ողջ սնունդն ու ըմպելիքներն օգտագործեն իրենց ավտոմեքենաների մեջ: Այս սննդի հաստատությունները պետք է հետևեն ռեստորանային և/կամ սննդի սպասարկման վերաբացման վերաբերյալ բոլոր կիրառելի արձանագրություններին: Այցելուները կարող են բերել իրենց սեփական սնունդը:

Լոս Անջելեսի Շրջանի Հանրային Առողջապահության Վարչությունը որդեգրում է փուլային մոտեցում՝ գիտության և հանրային առողջապահության փորձագիտական աջակցությամբ՝ թույլ տալու որոշ մանրածախ բիզնեսներին անվտանգ վերաբացվել: Ստորև ներկայացված հատուկ պահանջները վերաբերում են ավտոկինոթատրոններին, որոնց թույլատրվում է վերաբացվել Առողջապահության Պատասխանատուի Հրամանով: Նահանգի Հանրային Առողջապահության Գրասենյակի կողմից այս



Բիզնեսների համար սահմանված պայմաններից բացի, ավտոկինոթատրոնների բիզնեսները պետք է նաև հետևեն Ավտոկինոթատրոնների համար սույն Մտուգաթերթում սահմանված պայմաններին:

Խնդրում ենք նկատի ունենալ. Լրացուցիչ տեղեկությունների և ռեսուրսների հասանելի դառնալով պայմանավորված՝ սույն փաստաթուղթը կարող է թարմացվել, այսպիսով՝ անպայման կանոնավոր կերպով ստուգեք Լոս Անջելես Շրջանի կայքը <http://www.ph.lacounty.gov/media/Coronavirus/>՝ այս փաստաթղթի թարմացումների մասին տեղեկանալու համար:

Այս ստուգաթերթն ընդգրկում է.

- (1) Աշխատավայրի քաղաքականությունն ու գործելակերպը՝ աշխատակիցների առողջությունը պաշտպանելու նպատակով
- (2) Ֆիզիկական հեռավորությունն ապահովող միջոցառումներ
- (3) Վարակի վերահսկողությունն ապահովող միջոցառումներ
- (4) Հաղորդակցությունն աշխատակիցների և հանրության հետ
- (5) Կարևորագույն ծառայություններին անաչառ հասանելիությունն ապահովող միջոցառումներ

Նշված հինգ ոլորտները պետք է իրականացվեն, մինչև ձեր հաստատությունը մշակում է վերաբացման որևէ արձանագրություններ:

Սույն արձանագրությամբ սահմանված բոլոր բիզնեսները պետք է իրականացնեն ստորև նշված բոլոր կիրառելի միջոցառումները և պատրաստ լինեն բացատրելու, թե ինչու որևէ չիրականացված միջոցառում կիրառելի չէ իրենց բիզնեսի համար:

Բիզնեսի անունը՝ _____

Հաստատության հասցեն՝ _____

Հրապարակման ամսաթիվը՝ _____

ՆՇՈՒՄ՝ Սույն արձանագրության մեջ օգտագործված «ավտոմեքենա» բառը նշանակում է՝ ավտոմեքենա, ֆուրգոն, փոքր բեռնատար, ավտոֆուրգոն կամ այլ մեքենա, որն օգտագործվում է որպես անձնական փոխադրամիջոց: Տեղանքում ըստ անհրաժեշտության կարող են սահմանափակվել թույլատրվող փոխադրամիջոցների տեսակները կամ չափերը:

Ա. ԱՇԽԱՏԱՎԱՅՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԳՈՐԾԵԼԱԿԵՐՊԸ՝ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ (ՆՇԵԼ ԲՈԼՈՐԸ, ՈՐՈՆՔ ՎԵՐԱԲԵՐՈՒՄ ԵՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆԸ)

- Բոլոր նրանց, ովքեր կարող են իրենց աշխատանքային պարտականությունները կատարել տնից, հանձնարարվել է այդպես վարվել:
- Անձնակազմի խոցելի անդամներին (65 տարեկանից բարձր և, քրոնիկական հիվանդություններ ունեցող անձինք) հնարավորության դեպքում հանձնարարվում է այնպիսի աշխատանք, որ



կարելի է կատարել տնից:

- ❑ Բոլոր աշխատակիցներին (ներառյալ՝ վճարվող անձնակազմը, պրակտիկանտներն ու կամավորները, ում հավաքականորեն կանվանենք «աշխատակիցներ») ասվել է, որպեսզի չգան աշխատանքի, եթե հիվանդ են կամ շփվել են COVID-19-ով հիվանդ անձի հետ: Աշխատակիցները պետք է գիտակցեն, որ հարկավոր է հետևել DPH-ի (Հանրային Առողջապահության Վարչություն) ուղեցույցին ինքնամեկուսացման և ինքնակարանտինացման համար, եթե կիրառելի է: Բացակայությունների քաղաքականությունը պետք է վերանայվեն և ձևափոխվեն՝ երաշխավորելու համար, որ աշխատակիցները չեն տուժի, եթե հիվանդ լինելու պատճառով մնան տանը:
- ❑ Տրամադրվում է տեղեկատվություն գործատուի կամ պետության կողմից հովանավորվող բացակայության նպաստների մասին, որոնք աշխատակիցը միգուցե իրավունք ունենա ստանալու, որը ֆինանսապես կհեշտացնի տանը մնալը: Տես հավելյալ տեղեկություններ՝ հիվանդության հետևանքով բացակայությունների աջակցության պետական [ծրագրերի](#) և COVID-19-ի հետ կապված աշխատակիցների փոխհատուցումների վերաբերյալ՝ համաձայն [2021 COVID-19 Հիվանդության Հիմքով Լրացուցիչ Վճարովի Արձակուրդի մասին Օրենքի](#):
- ❑ Աշխատանքային գործընթացները հնարավորության սահմաններում վերաձևակերպվում են այնպես, որ աշխատակիցների՝ տնից աշխատելու հնարավորությունները մեծանան:
- ❑ Տեղեկացվելով, որ մեկ կամ մի քանի աշխատողների թեստի արդյունքը դրական է, կամ նրանք ունեն COVID-19-ի ախտանիշների նման ախտանիշներ (հիվանդ), գործատուն պետք է ունենա պատրաստի ծրագիր՝ որով [հիվանդները ինքնամեկուսանան տանը](#), ինչպես նաև պահանջի, որ բոլոր աշխատակիցները, որոնք աշխատավայրում շփվել են «հիվանդի» հետ, անմիջապես [ինքնակարանտինի ենթարկվեն](#): Գործատուի ծրագիրը պետք է ներառի արձանագրություն, որով կարանտինի մեջ գտնվող բոլոր աշխատակիցները կթեստավորվեն կամ նրանց հասանելի կլինի COVID-19-ի թեստավորումը՝ պարզելու, թե արդյոք աշխատավայրում եղել են շփման լրացուցիչ դեպքեր, որոնք կարող են պահանջել COVID-19-ի վերահսկման լրացուցիչ միջոցառումներ: Տես՝ Հանրային Առողջապահության ուղեցույցը [աշխատավայրում COVID-19-ին արձագանքելու վերաբերյալ](#)
- ❑ Իրականացվում են մուտքի ստուգումներ՝ նախքան աշխատակիցների, դերասանական կազմի, երաժիշտների և կատարողների մուտքն փակ կամ բացօթյա տարածքներ: Ստուգումները պետք է ներառեն ջերմության կամ դողի, հազի, շնչարգելության, դժվարացած շնչառության, համի կամ հոտի նոր առաջացած կորստի ստուգում, ինչպես նաև հարցում այն մասին, թե արդյոք անձը տվյալ պահին գտնվում է մեկուսացման կամ կարանտին պահպանելու հրահանգների ներքո: (Տես [Շքջանի Մուտքի Ստուգումների ուղեցույցը](#)): Այս ստուգումները կարող են կատարվել անձամբ կամ այլընտրանքային տարբերակներով՝ առցանց ստուգման համակարգերի կամ հաստատության մուտքի մոտ փակցված ցուցանակների միջոցով, որոնք տեղեկացնում են, թե ինչպիսի ախտանիշներ ունեցող այցելուները չպետք է մուտք գործեն հաստատություն:
 - Եթե անձը չունի որևէ ախտանիշ, տվյալ պահին չի գտնվում մեկուսացման կամ կարանտին պահպանելու հրամանի ներքո և վերջին 10 օրվա ընթացքում չի շփվել COVID-19-ով վարակված անձի հետ, ապա նրան կարող է թույլատրվել մասնակցել այդ օրվան:
 - Եթե անձն ամբողջովին պատվաստված չէ COVID-19-ի դեմ¹ և վերջին 10 օրվա ընթացքում

¹ Մարդիկ համարվում են COVID-19-ի դեմ ամբողջովին պատվաստված, 2 դեղաչափից բաղկացած պատվաստանյութի (օր.՝ Pfizer-BioNTech կամ Moderna) 2-րդ դեղաչափը ստանալուց ≥ 2 շաբաթ հետո կամ մեկ դեղաչափից բաղկացած պատվաստանյութը (օր.՝ Johnson and Johnson [J&J]/Janssen) ստանալուց ≥ 2 շաբաթ հետո:



շփվել է COVID-19-ով վարակված անձի հետ կամ տվյալ պահին գտնվում է կարանտին պահպանելու հրամանի ներքո, նրան պետք է անմիջապես ուղարկել տուն և պահանջել տանը կարանտին պահպանել: Տրամադրեք նրան կարանտին պահպանելու հրահանգները, որոնք կարելի է գտնել այստեղ՝ ph.lacounty.gov/covidquarantine: Ամբողջովին պատվաստված անձից կամ անձից, ով նախորդ 90 օրերի ընթացքում ապաքինվել է լաբորատոր հետազոտության արդյունքում հաստատված COVID-19-ից, չի պահանջվում կարանտին պահպանել նախորդ 10 օրերի ընթացքում COVID-19-ով վարակված անձի հետ շփվելուց հետո այն պայմանով, որ նա չպետք է ունենա ախտանիշներ: Անձինք, որոնց մոտ զարգանում են COVID-19-ի ախտանիշներ, պետք է ինքնամեկուսանան:

- Եթե անձի մոտ դրսևորվում է վերոնշյալ ախտանիշներից որևէ մեկը կամ տվյալ պահին նա գտնվում է մեկուսացման հրամանի ներքո, ապա նրան պետք է անմիջապես ուղարկել տուն և պահանջել մեկուսանալ տանը: Տրամադրեք նրան մեկուսացման հրահանգները, որոնք կարելի է գտնել այստեղ՝ ph.lacounty.gov/covidisolation:

- ❑ Աշխատավայրում 14 օրվա ընթացքում 3 կամ ավելի դեպքերի բացահայտման դեպքում, գործատուն պետք է զեկուցի այս բռնկումը Հանրային Առողջապահության Վարչությանը՝ (888) 397-3993 կամ (213) 240-7821 հեռախոսահամարով կամ առցանց www.redcap.link/covidreport: Եթե աշխատավայրում վարակված խումբ է հայտնաբերվում, Հանրային Առողջապահության Վարչությունը խմբի նկատմամբ արձագանք կնախաձեռնի, որը ներառում է՝ վարակի վերահսկման ցուցումների և խորհուրդների տրամադրում, մասնագիտական օժանդակություն և հաստատության համար առանձնահատուկ վերահսկման միջոցառումներ: Կնշանակվի խմբի հետազոտման գործի ղեկավար՝ օգնելու ուղղորդել հաստատության արձագանքը:
- ❑ Այն աշխատակիցներին, ովքեր շփվում են ուրիշների հետ, անվճար տրամադրվում է համապատասխան դիմակ, որը ծածկում է քիթը և բերանը: Լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս Լոս Անջելեսի Շրջանի Հանրային Առողջապահության Վարչության COVID-19-ի Դիմակների վեբ կայքը՝ <http://publichealth.lacounty.gov/acd/ncorona2019/masks>: Աշխատակիցը պետք է մշտապես կրի դիմակը ողջ աշխատանքային օրվա ընթացքում՝ այլ անձանց հետ շփվելու կամ շփման հավանականության պարագայում: Աշխատակիցները, ում բուժաշխատողները հանձնարարել են չկրել **դիմակներ**, պետք է կրեն ներքևի եզրին շղարշ ունեցող դեմքի վահաններ, որպեսզի համապատասխանեն Նահանգային պահանջների պայմաններին, եթե միայն նրանց վիճակը դա թույլ է տալիս: Նախընտրելի են այն տեսակի շղարշները, որոնք մարմնի ձևն են ստանում կզակի տակ: Միակողմանի փականներ ունեցող դիմակները չպետք է օգտագործվեն:
- ❑ Բոլոր աշխատակիցները մշտապես պետք է **դիմակներ** կրեն, բացառությամբ՝ փակ դռներով անձնական աշխատասենյակներում միայնակ աշխատելիս կամ ուտելիս կամ խմելիս: Նախկինում կատարված բացառությունը, որը նախատեսված էր կանգնած վիճակում աշխատակցի հասակը գերազանցող և ամուր միջնապատեր ունեցող խցիկում աշխատող աշխատակիցների համար, դադարեցվում է:
- ❑ Համոզվելու համար, որ դիմակները կրվում են հետևողականորեն և ճշգրիտ կերպով՝ աշխատակիցներին խորհուրդ է տրվում չուտել կամ չխմել, բացառությամբ՝ ընդմիջումների ընթացքում, երբ նրանք կարող են ապահով կերպով հանել իրենց դիմակները և ֆիզիկական հեռավորություն պահպանել մյուսներից: Ուտելու կամ խմելու ողջ ընթացքում աշխատակիցները պետք է առնվազն վեց ոտնաչափ հեռավորություն պահպանեն մյուսներից:



Հնարավորության դեպքում նախընտրելի է ուտել կամ խմել դրսում: Խցիկում կամ աշխատակայանում ուտելը կամ խմելը գերադասելի է ընդմիջման սենյակում ուտելուց, եթե խցիկում կամ աշխատակայանում ուտելն աշխատողների միջև ավելի մեծ հեռավորության և արգելքների առկայությունն է ապահովում:

- Զբաղվածությունը կրճատվում է, և աշխատողների միջև տարածությունն առավելագույնի է հասցվում ցանկացած սենյակում կամ տարածքում, որն աշխատակիցներն օգտագործում են ճաշերի և/կամ ընդմիջումների համար: Այս պահանջին հնարավոր է հասնել հետևյալ կերպ.
 - Նշել առավելագույն զբաղվածությունը, որը համապատասխանում է ընդմիջումների համար օգտագործվող սենյակներում կամ տարածքներում առնվազն վեց ոտնաչափ հեռավորության ապահովմանը, և
 - Փոփոխել ընդմիջումների կամ ճաշի ժամերը՝ ճաշերի և ընդմիջումների համար օգտագործվող սենյակներում կամ տարածքներում զբաղվածության թիվը նվազեցնելու համար, և
 - Մեղանները դնել **առնվազն ութ** ոտնաչափ հեռավորության վրա և ապահովել նստատեղերի միջև վեց ոտնաչափ հեռավորությունը, նստատեղերը հեռացնել կամ ժապավեններ կպցնել զբաղվածությունը նվազեցնելու համար, հատակների վրա գծանշումներ դնել՝ հեռավորությունն ապահովելու համար, և նստատեղերը դասավորել այնպես, որ նվազագույնի հասցվի դեմ առ դեմ շփումը: Միջնապատերի օգտագործումը խրախուսվում է՝ տարածման հետագա կանխարգելման համար, բայց չպետք է համարվի զբաղվածության կրճատմանը և ֆիզիկական հեռավորության պահպանմանը փոխարինող միջոց:
- Աշխատակիցներին պետք է հրահանգել ամեն օր լվանալ կամ փոխարինել իրենց **դիմակները**:
- Բոլոր աշխատակայանները կամ աշխատանքային տարածքները առանձնացված են առնվազն վեց ոտնաչափ հեռավորությամբ:
- Տոմսարկղերը, սնվելու համար նախատեսված տարածքները, աշխատակիցների ընդմիջման սենյակները, պետքարանները և այլ ընդհանուր տարածքները **ախտահանվում են ստորև նշված հաճախականությամբ, սակայն ոչ պակաս, քան օրը մեկ անգամ՝** հետևյալ ժամանակացույցով.
 - Տոմսարկղ/եր _____
 - Սնվելու համար նախատեսված տարածքներ _____
 - Ընդմիջման սենյակներ _____
 - Պետքարաններ _____
 - Այլ _____
- Ախտահանիչներն ու այլ պարագաները աշխատակիցների համար հասանելի են հետևյալ վայր(եր)ում՝ _____
- COVID-19-ի դեմ արդյունավետ ձեռքի ախտահանիչ միջոցը հասանելի է բոլոր աշխատակիցներին հետևյալ վայր(եր)ում՝ _____
- Աշխատակիցներին թույլատրվում է հաճախակի ընդմիջումներ անել՝ ձեռքերը լվանալու նպատակով:



- Այս արձանագրության կրկնօրինակը բաժանվել է բոլոր աշխատակիցներին:
- Յուրաքանչյուր աշխատողի հատկացված է իր սեփական գործիքները, սարքավորումներն ու սահմանված աշխատանքային տարածքը: Ձեռքում պահվող իրերի համատեղ կիրառությունը նվազագույնի է հասցվում կամ բացառվում:
- Աշխատանքային պայմաններից բացի, այս ստուգաթերթում նկարագրված բոլոր քաղաքականությունները կիրառվում են ծառայություն մատուցող անձնակազմի և ցանկացած այլ ընկերությունների համար, որոնք ներկա են տարածքում որպես երրորդ կողմ:
- Ընտրովի. Նկարագրել այլ միջոցառումներ՝

Բ. ՖԻԶԻԿԱԿԱՆ ՀԵՌԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

- Հնարավորության դեպքում կիրառվում են անկանխիկ և անհպում գործարքների համակարգեր: Նախնական պատվերները և վճարումները կարող են կատարվել նախօրոք՝ առցանց կամ հեռախոսով:
- Մեքենաները պետք է լինեն առնվազն վեց ոտնաչափ հեռավորության վրա և մեքենաներից դուրս մարդկանց կուտակումներ չեն թույլատրվում: Ավտոկլիտթաստրոններին նայող կայանատեղերը սահմանափակվում են մեկուկես տեղերով կամ վերաձևակերպվում են՝ ապահովելու համար բավարար հեռավորություն մեքենաների միջև:
- Յուրաքանչյուր մեքենայի մեջ կարող են լինել նույն տան անդամները, ովքեր արդեն իսկ մոտիկ շփում են ունեցել միմյանց հետ: Հաճախորդները պետք է մնան իրենց մեքենաներում՝ բացառությամբ այն դեպքերի, երբ օգտվում են պետքարաններից կամ վերցնում են ուտելիք: Հաճախորդները չեն կարող նստել մեքենաներից դուրս, օրինակ՝ ավտոկլիտթաստրոնի ֆիլմը մեքենայի մոտ դիտելու համար:
- Ներս մտնող մեքենաներին չի թույլատրվում ունենալ նախատեսված առավելագույն ուղևորների քանակից ավել ուղևորներ:
- Անձինք պետք է մնան իրենց մեքենաներում: Ծալվող տանիքով ավտոմեքենաները (կոբրիոլետ) կարող են ծալել տանիքը, իսկ դիտողները կարող են նստել իրենց մեքենաների արտաքին հատվածներում ինչպես օրինակ պիկապ մեքենայի ետնամասում):
- Դիմակներ** կրող անձնակազմը պետք է կանգնի առնվազն վեց ոտնաչափ հեռավորության վրա, որպեսզի ուղղորդեն հաճախորդներին դեպի բաց կայանատեղերը:
- Երեխաների խաղահրապարակները **կարող են գործել՝ համաձայն Շրջանի Բացօթյա Խաղահրապարակների Ուղեցույցի:**
- Խնջույքի** տարածքները և ֆիլմի ցուցադրումից առաջ մեծահասակների հանգստի տարածքները փակ են: Դիտողները չպետք է օգտագործեն բացօթյա նստատեղեր և պետք է մնան իրենց մեքենաներում: Դիտման վայրից 100 ոտնաչափ հեռավորության վրա գտնվող բացօթյա նստատեղերը պետք է փակ լինեն ներկայացման մեկնարկից մեկ ժամ առաջ և փակ մնան մեկ ժամ ներկայացման ավարտից հետո:
- Դիմակներ** կրող աշխատակիցները կանգնում են սննդի կետերի և պետքարանների մուտքերի մոտ՝ միմյանցից և մոտակա հաճախորդներից առնվազն վեց ոտնաչափ հեռավորության վրա՝ հավաստիանալու համար, որ հերթերում և հաստատությունների ներսում պահպանվում է 6 ոտնաչափ հեռավորությունը:



- Մնվելու գործողությունները, որոնք մեքենայով մշտական կինոթատրոնների մաս են կազմում, վերաձևակերպվում են՝ թույլ տալու ֆիզիկական հեռավորություն:
 - Հնարավորության դեպքում առաջարկվում է էլեկտրոնային նախնական պատվիրում ու վճարում՝ իմանալով պատվերը վերցնելու ժամը:
 - Եթե հաճախորդներին թույլատրվում է պատվիրել և վերցնել պատվերը սննդի կետից, ապա նրանց առաջարկվում է ճաշացանկը (փակցված կամ մեկանգամյա օգտագործման թերթիկ)՝ հեշտացնելու պատվիրելու գործընթացը և հաճախորդը տեղում պատվիրված, փաթեթավորված պատվերը վերցնում է 15 րոպեի ընթացքում: Պատվերին սպասելիս հաճախորդները չեն կարող հավաքվել սննդի կետի տարածքում: Նրանք կարող են սպասել սննդի կետի տարածքից դուրս՝ միմյանցից 6 ոտնաչափ հեռավորության վրա, կամ կարող են վերադառնալ իրենց մեքենաները և ապա վերադառնալ նշանակված ժամին՝ իրենց պատվերը վերցնելու համար:
 - Եթե հաճախորդները պետք է հերթ կազմեն սնունդը վերցնելու համար, ժապավենների կամ այլ զծանշանների միջոցով նշվում է այն սկզբնական վայրը, որտեղ հաճախորդները ժամանում են պատվերը վերցնելու համար, և 6 ոտնաչափ հեռավորության վրա տեղեր՝ հերթին միացող այլ հաճախորդների համար:
 - 12 տարեկանից ցածր երեխաներին չի թույլատրվում միայնակ այցելել սննդի կետի տարածք կամ պետքարան:
 - Մսնդի պատվերները վերցնելիս մեքենայում երկու մեծահասակից բացի այլ անձի ներկայություն չի թույլատրվում: Եթե մեկ մեծահասակ վերցնում է պատվերը, նրան կարող է ուղեկցել մեկ երեխա:
 - Ցուցադրումի ավարտից առնվազն 30 րոպե առաջ սննդի կետերը դադարում են նոր պատվերներ վերցնել:
- Եթե հաճախորդները պետք է հերթ կազմեն պետքարան մտնելու համար, ժապավեններով կամ այլ զծանշաններով նշվում է այն տեղը, որտեղից ժամանող հաճախորդը պետք է սկսի հերթը, և 6 ոտնաչափ հեռավորությամբ տեղեր՝ հերթին միացող այլ հաճախորդների համար:
- Աշխատակիցներին ցուցված է պահպանել առնվազն 6 ոտնաչափ հեռավորություն հաճախորդներից և միմյանցից սնունդ պատվիրելու, պատվերը վերցնելու և վճարման տարածքներում: Աշխատակիցները կարող են անհրաժեշտության դեպքում մեկ ակնթարթով մոտենալ՝ վճարումը ստանալու, ապրանք կամ ծառայություն մատուցելու, կամ այլ անհրաժեշտությունների դեպքում:
- Կրկնակի ցուցադրությունները բացառված են և ցուցադրման ժամանակը սահմանափակ է կամ ցուցադրությունը մաս առ մաս է՝ ընդմիջումներից և ցուցադրությունների միջև եղած ժամանակահատվածում կուտակումներից խուսափելու նպատակով:
- Նշանակվում են բավարար քանակով անվտանգության աշխատակիցներ և/կամ անձնակազմ, ում հանձնարարվում է ապահովել, որ աշխատակիցները և հաճախորդները պահպանեն բոլոր պահանջները:

Գ. ՎԱՐԱԿԻ ՎԵՐԱՀՄԿՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ



- ❑ Փակ տոմսարկղերում, սննդի կետերի տարածքում և պետքարաններում օդորակման, օդափոխման և ջեռուցման համակարգերը լավ և աշխատող վիճակում են: Օդափոխությունը կատարվում է առավելագույն մակարդակով: Ցանկալի է տեղադրել բարձր արդյունավետության շարժական օդային գոծիչներ, արդիականացնել շինության օդային ֆիլտրերը և կատարել այլ փոփոխություններ՝ մեծացնելու գրասենյակներում և այլ տարածքներում արտաքին օդի քանակը: Մանրամասն տեղեկությունների համար տե՛ս Կալիֆոռնիայի Հանրային Առողջապահության Վարչության [Փակ Տարածքներում Օդափոխության, Զտման և Օդի Որակի Ապահովման Ժամանակավոր Ուղեցույց](#):
 - Խնդրում ենք նկատի ունենալ. Օդափոխությունը և փակ տարածքներում օդի որակի բարելավմանն ուղղված մյուս գործողությունները հանդիսանում են լրացում և չեն փոխարինում պաշտպանվելուն ուղղված պարտադիր գործողությունները, ներառյալ դիմակներ կրելը (բացառությամբ՝ բարձր վտանգ ներկայացնող հատուկ միջավայրներում, որոնք պահանջում են պատշաճ շնչառական պաշտպանիչ միջոցառումներ), մարդկանց միջև առնվազն վեց ոտնաչափ հեռավորություն պահպանելը, ձեռքերը հաճախակի լվանալը և այնպիսի սահմանափակող գործողությունները, որոնք միավորում են տարբեր ընտանիքների անդամ հանդիսացող անձանց:
- ❑ Թղթե տոմսերը կարող են ընդունվել աշխատակազմի անդամի կողմից, ով գտնվում է տոմսարկղի ներսում, կրում է **դիմակ** և միանգամյա օգտագործման ձեռնոցներ և պաշտպանված է համապատասխան պատնեշով: Էլեկտրոնային տոմսերը կամ անդորրագրերը կարող են սկանավորվել տոմսարկղում գտնվող և վերոնշյալ ձևով պաշտպանված աշխատակցի կողմից կամ բացօթյա տարածքում գտնվող աշխատակցի կողմից, ով կրում է **դիմակ**:
- ❑ Պետքարաններում, սննդի պատվերները վերցնելու և վճարման տարածքներում հաճախակի դիպման մակերեսները (օրինակ՝ վաճառասեղաններ, դռան բռնակներ կամ այլ բռնակներ, վարկային քարտերի սկաններներ), ախտահանվում են **օրվա ընթացքում առնվազն մեկ անգամ** աշխատանքային ժամերի ընթացքում՝ Շրջակա Միջավայրի Պաշտպանության Գործակալության կողմից հաստատված ախտահանիչ միջոցներով:
- ❑ Աշխատանքային տարածքները և ամբողջ հաստատությունը մաքրվում է առնվազն ամեն օր, իսկ պետքարաններն ու հաճախակի դիպչող տարածքները/իրերը մաքրվում են ավելի հաճախ՝ **ըստ անհրաժեշտության**:
- ❑ Հաստատություն ժամանող հաճախորդներին հիշեցվում է, որ կրեն **դիմակներ** հաստատությունում և դրա տարածքում գտնվելու ամբողջ ընթացքում, (բացառությամբ՝ ուսելիս կամ խմելիս, եթե կիրառելի է): Սա վերաբերում է բոլոր չափահասներին և 2 տարեկան և ավելի մեծ երեխաներին: Այն անձինք, ում բուժաշխատողը հանձնարարել է չկրել **դիմակ**, պետք է կրեն ստորին հատվածում կտոր ամրացված դեմքի վահան՝ համապատասխանելու Նահանգի հրահանգներին, եթե իրենց առողջական վիճակը թույլ է տալիս: Ձեր աշխատակիցների և այլ մասնակիցների անվտանգությանն աջակցելու նպատակով՝ հարկավոր է դեմքի ծածկոցներ տրամադրել այն այցելուներին, ովքեր գալիս են առանց դրանց:
- ❑ Իրականացվում են մուտքի ստուգումներ՝ նախքան հաճախորդների մուտքը **հաստատության փակ կամ բացօթյա տարածքներ**: Ստուգումները պետք է ներառեն հազի, շնչարգելության, դժվարացած շնչառության, ջերմության կամ դողի ստուգում, ինչպես նաև հարցում այն մասին, թե արդյոք անձը տվյալ պահին գտնվում է մեկուսացման կամ կարանտին պահպանելու հրամանների ներքո: (**Տե՛ս [Շրջանի Մուտքի Ստուգումների ուղեցույց](#)**): Այս ստուգումները կարող են կատարվել հեռավար կարգով կամ այլընտրանքային տարբերակներով՝ առցանց ստուգման համակարգերի



կամ հաստատության մուտքի մոտ փակցված ցուցանակների միջոցով, որոնք տեղեկացնում են, թե ինչպիսի ախտանիշներ ունեցող այցելուները չպետք է մուտք գործեն հաստատություն:

- Ստուգման Բացասական Արդյունք (Մուտքը Թույլատրվում է). Եթե անձը չունի ախտանիշ(ներ) և վերջին 10օրերի ընթացքում շփում չի ունեցել COVID-19-ով վարակված անձի հետ, նա կարող է այդ օրը մուտք գործել:
- Ստուգման Դրական Արդյունք (Մուտքը Չի Թույլատրվում).
 - Եթե անձը վերջին 10 օրերի ընթացքում շփում է ունեցել COVID-19-ով վարակված անձի հետ կամ տվյալ պահին ենթակա է կարանտին պահպանելու հրամանին, նա չի կարող մուտք գործել և նրան պետք է անմիջապես ուղարկել տուն՝ տանը կարանտին պահպանելու: Տրամադրեք նրան կարանտին պահպանելու հրահանգները, որոնք կարելի է գտնել այստեղ՝ ph.lacounty.gov/covidquarantine:
 - Եթե անձի մոտ դրսևորվում է վերևում թվարկված ախտանիշներից որևէ մեկը, կամ նա տվյալ պահին ենթակա է մեկուսացման հրամանին, նա չի կարող մուտք գործել և նրան պետք է անմիջապես ուղարկել տուն՝ մեկուսանալու տանը: Տրամադրեք նրան մեկուսացման հրահանգները, որոնք կարելի է գտնել այստեղ՝ ph.lacounty.gov/covidisolation:

- ❑ Երեխաների հետ տարածք ժամանող հաճախորդները պետք է ապահովեն, որ երեխաները առանց ուղեկցության դուրս չգան մեքենաներից: Եթե երեխան պետք է գնա պետքարան կամ միանա սննդի տարածքում գտնվող մեծահասակին, ուղեկցող մեծահասակը պետք է ապահովի, որ երեխան նրա մոտ մնա, չդիպչի այլ անձանց կամ իրեն չպատկանող իրի, և կրի **դիմակ**, եթե նրա տարիքը դա թույլ է տալիս:
- ❑ Ձեռքի ախտահանիչ միջոցները, անձեռոցիկներն ու աղբամանները հասանելի են հաճախորդներին սանհանգույցի մուտքի մոտ կամ կոնցեսիոն տարածքներում:
- ❑ Ընտրովի - Նկարագրել վարակի վերահսկման այլ միջոցառումներ՝

Դ. ՀԱՆՐՈՒԹՅԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

- ❑ Սույն արձանագրության պատճենը, կամ, եթե կիրառելի է, հաստատության կողմից տպագրված Լոս Անջելեսի Շրջանի COVID-19-ի Անվտանգության Համապատասխանության Վկայականը պետք է փակցվի հաստատության բոլոր հանրային մուտքերի մոտ: Լրացուցիչ տեղեկությունների կամ COVID-19-ի Անվտանգության Համապատասխանության ինքնուրույն վավերացման ծրագիրը լրացնելու համար այցելեք <http://publichealth.lacounty.gov/eh/covid19/safety-compliance-certificate-program.htm>: Հաստատությունները պետք է տեղում պահեն Արձանագրությունների պատճենները՝ ըստ պահանջի վերանայման համար:
- ❑ Հաստատությունը առցանց (կայքերի, սոցիալական լրատվամիջոցների միջոցով և այլն) ցուցումներ է տալիս հաճախորդներին, թե ինչպես գնել տոմսեր առցանց, ինչպես նաև այն մեթոդների վերաբերյալ, որոնցով կարելի է ապացուցել գնումը տեղում:
- ❑ Հաստատությունը առցանց (կայքերի, սոցիալական լրատվամիջոցների միջոցով և այլն) հստակ տեղեկատվություն է տրամադրում բացման ժամերի, **դիմակ** կրելու անհրաժեշտության, ինչպես նաև նախապես պատվիրելու, նախապես վճարելու, պատվիրված պարագաները վերցնելու և/կամ առաքելու և այլ հարցերի վերաբերյալ: Այս արձանագրության կրկնօրինակը փակցված է



հաստատության բոլոր հանրային մուտքերի մոտ:

- Տեղադրվել է ցուցանակ՝ հստակ հրահանգելու հանրությանը՝ ինչպես պահպանել անվտանգություն հաստատության տարածքում (օրինակ՝ ֆիզիկական հեռավորության պահպանում, դիմակ կրել և այլն): Լրացուցիչ ռեսուրսների և բիզնեսների կողմից օգտագործվող ցուցանակների օրինակների համար տե՛ս Շրջանի Հանրային Առողջապահության Վարչության COVID-19-ի Ուղեցույցը՝ <http://publichealth.lacounty.gov/media/Coronavirus/guidances.htm#business>:
- Տարածքի մուտքի մոտ և բոլոր այն վայրերում, որտեղ հաճախորդները հերթ են կանգնում, կա տեսանելի ցուցանակ, որը տեղեկացնում է հաճախորդներին ֆիզիկական հեռավորության և վարակի վերահսկման վերաբերյալ պահանջների մասին: Դրանց շարքում են՝
 - Մեքենաներից դուրս հավաքների կամ դիտումների արգելք;
 - Մենդի կետից նախապես պատվիրելու հնարավորություն;
 - Մենդի կետեր կամ պետքարաններ այցելելիս կտորե դիմակ կրելու պահանջ;
 - Մեծահասակների կողմից երեխաների վերահսկողության պահանջ;
 - Աշխատակիցների վերոհիշյալ ցուցումների հարգալից կատարում:
- Էկրանի վրա ցուցադրությունից առաջ հայտարարություն է արվում՝ ամրապնդելու հաճախորդների՝ ֆիզիկական հեռավորության և վարակի վերահսկման պահանջների վերաբերյալ տեղեկացվածությունը, ինչպես նշված է վերևում:
- Մենդի կետերի մոտ տեղում պատվիրել ցանկացող հաճախորդներին հասանելի է այն ապրանքների ճաշացանկը, որոնք կարելի է գնել:

**Ե. ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒԹՅՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԱՆԱՉԱՌ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆ
ԱՊԱՀՈՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ**

- Առաջնահերթություն է տրվել հաճախորդների/գնորդների համար կարևոր ծառայություններին:
- Այն գործարքները կամ ծառայությունները, որոնք կարող են առաջարկվել հեռակա, կատարվում են առցանց:
- Ձեռնարկվում են միջոցառումներ՝ ապրանքների և ծառայությունների հասանելիություն ապահովելու այն հաճախորդների համար, որոնք ունեն սահմանափակ տեղաշարժման հնարավորություն և/կամ հանրային տարածքներում գտնվում են բարձր ռիսկի տակ:

**Զ. ԱՎՏՈԿԱՅԱՆԱՏԵՂԻՆԵՐՈՒՄ ԿԱՄ ԱՅԼ ՎԱՅՐԵՐՈՒՄ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՄ ԿԻՍԱՄՇՏԱԿԱՆ
ՏԵՂԱԴՐՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ**

- Հանրային Առողջապահության Ծանուցում՝ Կազմակերպությունները, որոնք ցանկանում են ստեղծել մեքենայով կինոթատրոններ այն վայրերում, որոնք սովորաբար չեն օգտագործվում նման նպատակով, պետք է ներկայացնեն գրավոր ծրագիր՝ հասցեագրելու անվտանգության և առողջապահության բոլոր խնդիրները՝ ehmail@ph.lacounty.gov –ին առնվազն 7 օր առաջ: Շրջակա Միջավայրի Առողջապահությունը կարող է պահանջել նաև ոտքով գնում՝ տարածքը և հաստատությունը գնահատելու համար:



- ❑ **Տեղանքի Չափը`** Տեղանքը պետք է բավականին ընդարձակ լինի, որպեսզի տեղավորի սպասվող բոլոր հյուրերին և իրենց մեքենաները` պահպանելով 6 ոտնաչափ կամ ավել հեռավորություն բոլոր մեքենաների միջև, ապահովի բավարար տարածք սանհանգույցների համար, ձեռքերի լվացման կայանների, ֆիլմի հեռարձակման և անձնակազմի հանգստի տարածքների համար:
- ❑ **Պարագծի և մասնակիցների վերահսկում`** Մշակեք ծրագիր, որը կսահմանի հանրային առողջապահության սահմանափակումներին հետևելու առավելագույն հնարավորությունը` ապահովելով մուտքերի և ելքերի վերահսկումը:
- ❑ **Մնունդ`** Ցանկացած սննդի ծառայություն պետք է լինի տեղում լիցենզավորված ռեստորանից կամ շուկայից, որը թույլատրվում է Շրջակա Միջավայրի Առողջապահության կողմից: Մնունդ կարող է գնվել և վերցվել տեղում կամ պատվիրվել երրորդ կողմի առաքման ծառայությունների միջոցով և առաքվել հաճախորդի մեքենայի մոտ: Այս սննդի հաստատությունները պետք է հետևեն ռեստորանային և/կամ սննդի սպասարկման վերաբացման վերաբերյալ բոլոր կիրառելի արձանագրություններին: Այցելուները կարող են բերել իրենց սեփական սնունդը: Ժամանակավոր կոնցեսիոն տաղավարները, արգելված կոնցեսիոն տաղավարները և սննդի մյուս հաստատությունները (օրինակ` սպասարկվող սնունդ, սննդի սալյակներ) չեն թույլատրվում:
- ❑ **Սանհանգույցներ և ձեռքերի Լվացում`** Եթե պետքարանները կամ ձեռքերի լվացման կայանները հասանելի չեն, կամ դրանց քանակը չի բավարարում սպասվող այցելուների կարիքները, ապա տարածքը պետք է ապահովվի շարժական պետքարաններով և ձեռքերի լվացման կայաններով: Պետք է լինի մոտավորապես 1 զուգարան և ձեռքերի լվացման 2 կայան` ըստ 100 այցելուների:

Է. ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՀԱՄԵՐԳՆԵՐ ԵՎ ԿԵՆԴԱՆԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄՆԵՐ

- ❑ Անձնակազմի բոլոր անդամներին, դերասանական ողջ կազմին, երաժիշտներին ու կատարողներին հանձնահարվում է դիմակներ կրել և մշտապես միմյանցից պահպանել վեց (6) ոտնաչափ հեռավորություն, բացառությամբ այն դեպքերի, երբ հատուկ առաջադրանքների համար պահանջվում է աշխատանք ավելի մոտիկից:
- ❑ Բոլոր պայմանագրերը, սցենարները, երաժշտական թերթիկները և ցանկացած այլ փաստաթղթեր, որոնք սովորաբար համատեղ են օգտագործվում, կամ բաժանվում են թվայնորեն, կամ տպվում են և անհատապես հանձնվում են դերասանական կազմին, երաժիշտներին և կատարողներին` համատեղ օգտագործումից խուսափելու համար:
- ❑ Հնարավորության դեպքում յուրաքանչյուր ոք պետք է օգտագործի իր սեփական սարքերը (այդ թվում` ականջակալներ, բարձրախոսներ, հենարաններ), պարագաները և այլն: Եթե սարքերը պետք է համատեղ օգտագործվեն, դրանք պետք է ախտահանվեն յուրաքանչյուր օգտագործումից հետո:
- ❑ Անհրաժեշտ է ապահովել հեռավորության նշաններ` համապատասխան սոցիալական հեռավորությունը ցույց տալու համար: Բարձրախոսները, հենարանները և այլ սարքավորումները պետք է այնպես տեղադրվեն, որ հնարավոր լինի պահպանել սոցիալական հեռավորություն:
- ❑ Բոլոր երաժիշտներն ու երգիչները, որոնք կատարում են այնպիսի աշխատանք, որի ժամանակ չեն կարող դիմակ կրել (օրինակ` փողային գործիքներ նվագող երաժիշտներ, երգիչներ), պետք է յուրաքանչյուր փորձի և ելույթի ընթացքում փորձեն պահպանել նվազագույնը **12** ոտնաչափ սոցիալական հեռավորություն: Այլապես այդ անձինք պետք է առանձնացվեն մյուսներից և միմյանցից պլեքսիգլասով կամ այլ պատնեշներով:



- Տաղանդներն անհրաժեշտության դեպքում պետք է ժամանեն պատրաստի վարսահարդարմամբ և դիմահարդարմամբ:
- Բոլոր բացօթյա կենդանի կատարումները պետք է համապատասխանեն **Բացօթյա Նստելակարգով Կենդանի Միջոցառումների Արձանագրության` Հավելված Z-ին:**

Վերոհիշյալ միջոցառումներում չներառված ցանկացած լրացուցիչ միջոցառում պետք է նշվի առանձին էջերի վրա, որոնք բիզնեսի սեփականատերը պետք է կցի այս փաստաթղթին:

Այս արձանագրության մասին ցանկացած հարցի կամ մեկնաբանության համար կարող եք կապվել հետևյալ անձի հետ`

Բիզնեսի
կոնտակտային
անուն`

Հեռախոսահամար`

Վերջին
վերանայման
ամսաթիվ`
